քում շարունակ կրկնուել են։ Այդ տեսակ արգելական օրէնքներ կարող էին երևան գալ միմիայն այն ժամանակ, երբ իրականութեան մէջ գոյութիւն են ունենում արգելումն առաջացնող պայմաններ։ Օրէնսդրութեան խիստ որոշումներն ու նրա դարևոր գործադրութիւնը գրաւական են, թէ ժողովրդի մէջ ինչպիսի մեծ ծաւալով էր արմատացած առևանգումն և ինչպիսի դժուարին մաքառման ու հալածանքի էր ենթարկուած նա վարչական մարմինների կողմից։

Քրիստոնէութիւնը, մուտք գործելով Հայաստան, սկսեց հալածել այն ամենն, ինչ յիշեցնում էր հեթանոսութեան գաղափարը։ Այդ հակաքրիստոնէական ոգու շարքն էր դասուելու անշուշտ և առևանգման սովորութիւնը։ Եւ ահա հենց առաջի քայլում, երբ առիթ է լինում յատուկ կանոններ մշակելու և օրէնսդրական ոյժ տալ նրանց, յօրինւում է 'ի միջի այլոց նաև առևանգման վերաբերեալ մի կանոն։ Գրիգոր Լուսաւորչի նախաձեռնութեամբ Վաղարշապատում գումարուած եկեղեցական ժողովը (325 թ.) սահմանում է 9-րդ կանոնը, որ ասում է. «Եթէ ոք առևանգ արասցէ, պսակն այն յաւեր եղիցի, և պսակեալն ում կամի՝ լիցի*)։ Մօտաւորապէս մի դար յետոյ կայանում է Շահապիվանի ժողովը (447 թ.), որտեղ մշակւում են նոր կանոններ, որոնցից 7-րդն առևանգման հարցին է վերաբերում. «Որք բռնութեամբ և անիրաւութեամբ առևանգ առնիցեն, կալցեն զկինն և անդրէն տացեն ցհայր և ցմայր, և տուգան տացեն փոխանակ անարգանացն, եթէ ազատ է՝ ՌՄ (1200) դրամ, եթէ շինական է ՈՎ (600) դրամ։ Եւ որ հրոսն երթեալ էին օգնականք սուտ փեսային՝ առ այրն ՃՃ (100) դրամ տուգանիցեն և զհրոսին դրամն զկէսն յեկեղեցին տայցեն և զկէսն կարօտելոց։ Ապա եթէ սուտ փեսայն ընդ աղջկանն պոռնկեցաւ առանց պսակ դնելոյ՝ յեկեղեցի տուգան կալցին ՃՃ (100) դրամ,

*) Արէլ եպս. Մխիթարեան՝ «Պատմութիւն ժողովոց հայաստանեայց եկեղեցւոյ», եր. 20.

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան